ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 39 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 7-Ի Ա 453-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ մասերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի N 1180-Ն որոշման հավելվածի 39-րդ կետի պահանջները.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. «Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզում բնակչության տարհանման հավաքակայաններ ստեղծելու մասին» Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2022 թվականի դեկտեմբերի 7-ի Ա 453-Ա որոշմամբ հաստատված հավելված 1-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի տեղակալին:
3. Սույն որոշումը հայտարարել ըստ առնչության:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետ

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 2/4/2026 14:27:17 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս.ՄՈՎՍԻՍՅԱՆ

2026թ. փետրվարի 4

ք.Աշտարակ